ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցություն

2020-2022

ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ (ՄԺԾԾ) ՀԱՅՏ

1. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1.1. Պետական մարմնի առաքելությունը և իրականացվող ծրագրերը

Հայաստանի Հանրապետությունում կայուն տնտեսական աճի ապահովման քաղաքականության համատեքստում արդյունաբերության զարգացումը կոչված ապահովելու երկրի տնտեսական աճի կայունությունը՝ տնտեսությանը հաղորդելով նորարարական ուղղվածություն և ճկունություն:

Դրա հետ մեկտեղ արդյունաբերությունը նշանակալի ազդեցություն ունի երկրի տնտեսական զարգացման վրա՝ ապահովելով զգալի սոցիալ-տնտեսական արդյունք և տարածքային համաչափ զարգացում:

Կարևորելով արդյունաբերության դերը երկրի տնտեսության զարգացման, նոր աշխատատեղերի ստեղծման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, հասարակության միջին խավի ձևավորման, երկրում սոցիալական և քաղաքական կայունության ապահովման գործում Հայաստանի Հանրապետության կառավարությունը շարունակական քայլեր է ձեռնարկում՝ ուղղված մշակող արդյունաբերության պետական աջակցության և դրա զարգացման ուղղությամբ համապատասխան ծրագրերի իրականացմանը:

Այդ իսկ նպատակով իրականացվել է պետական աջակցություն ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման ծրագիրը: Հայաստանի Հանրապետության կայուն տնտեսական զարգացման տեսանկյունից Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարևորում է արտահանմանն ուղղված պետական աջակցությունը՝ համապատասխան գործիքների կիրառմամբ:

2013 թվականից սկսած Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից մեկնարկել է Պետական աջակցություն Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրա-կանացման շարունակական ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր), որն ուղղված է արդյունաբերական արտադրանքի (ծառայությունների) արտահանելի հատվածի ընդլայնմանը և արտահանման ներուժ ունեցող կազմակերպությունների կարողությունների զարգացմանը:

Ծրագիրը մշակվել է ապահովելու երկարաժամկետ հեռանկարում նպաստելու տնտեսական աճի նոր շարժիչ ոլորտների ձևավորումը՝ կազմակերպությունների, արտահանման պոտենցիալ ունեցող ոլորտների և բիզնես միջավայրի արդիականացման և միջազգային մրցունակության բարձրացմանն ուղղված նախաձեռնությունների իրականացման: Միջոցառումներն ուղղված են տնտեսության արտահանելի հատվածի ընդլայնմանը, արտահանման ներուժի բացահայտմանը, արտահանման ներուժ ունեցող կազմակերպությունների կարողությունների զարգացմանը, գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանը, համապատասխան ենթակառույցների ձևավորմանը, կրթության որակի և մատչելիության բարձրացմանը:

Ծրագրի մշակման համար հիմք են հանդիսացել՝

1) Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը.
2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1515-Ն որոշման 13-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությունը.
3) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2011 թվականի դեկտեմբերի 15-ի նիստի N 49 արձանագրության 9-րդ կետով հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմա-վարությունը» (այսուհետ՝ ռազմավարություն).

4) Ռազմավարության իրականացման և համակարգման նպատակով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2012 թվականի փետրվարի 29-ի N 178-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության վարչապետին կից Արդյունաբերական խորհրդի կողմից հավանության արժանացած ոլորտային ռազմավարությունները և դրանց իրականացումն ապահովող գործողությունների ծրագրերը.
5) Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 14-ի N 131-Ն որոշման 1-ին կետով հաստատված Հավելված N 1-ի 25-րդ կետը.
6) Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի նիստի N 1 արձանագրության 15-րդ կետով հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության արդյունաբերության զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» արձանագրային որոշումը.
7) Համաշխարհային բանկի աջակցությամբ մշակված և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2011 թվականի դեկտեմբերի 15-ի նիստի N 49 արձանագրության 9-րդ կետով հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությունը, որի համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությունն իրագործում է հատուկ պետական աջակցության ծրագիր՝ կարևորելով ձեռնարկատիրության դերը տնտեսության զարգացման և հատկապես՝ զբաղվածության ապահովման բնագավառում.
8) արդյունաբերական քաղաքականության իրականացումն ապահովելու և Հայաստանի Հանրապետության պետական այլ կառույցների գործունեությունը համակարգելու նպատակով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2012 թվականի փետրվարի 29-ի N 178-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության վարչապետին կից Արդյունաբերական խորհուրդ, որը, հանդիսանալով ռազմավարության իրականացման աշխատանքների համակարգող բարձրագույն մարմին՝ կապահովի ռազմավարության արդյունավետ իրականացումը.
9) Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի համապատասխան հրամանները՝ դեղագործության և բիոտեխնոլոգիաների, գինեգործության և կոնյակագործության, ճշգրիտ ճարտարագիտության, թեթև արդյունաբերության և ոսկեգործության, ադամանդագործության և ժամագործության ոլորտային խորհուրդների որոշումները:
10) 2012 թվականի ապրիլի 20-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և կոնյակագործության ոլորտի ներկայացուցիչների միջև կոնյակագործության ոլորտային ռազմավարության իրականացման վերաբերյալ» հուշագիրը.
11) 2012 թվականի ապրիլի 20-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և դեղագործության ու բիոտեխնոլոգիաների ոլորտի ներկայացուցիչների միջև դեղագործության ու բիոտեխնոլոգիաների ոլորտային ռազմավարության իրականացման վերաբերյալ» հուշագիրը.
12) 2012 թվականի նոյեմբերի 27-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և ճշգրիտ ճարտարագիտության/ ճարտարագիտության ոլորտի ներկայացուցիչների միջև ճշգրիտ ճարտարագիտության/ ճարտարագիտության ոլորտի ռազմավարության և գործողությունների ծրագրի իրականացման վերաբերյալ» հուշագիրը.
13) 2012 թվականի նոյեմբերի 27-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և գինեգործության ոլորտի ներկայացուցիչների միջև գինեգործության ոլորտի ռազմավարության և գործողությունների ծրագրի իրականացման վերաբերյալ» հուշագիրը.
14) 2014 թվականի փետրվարի 5-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և թեթև արդյունաբերության ոլորտի ներկայացուցիչների միջև թեթև

արդյունաբերության ոլորտի ռազմավարության և գործողությունների ծրագրի իրականացման վերաբերյալ» հուշագիրը.

15) 2014 թվականի փետրվարի 5-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և ոսկեգործության, ադամանդագործության և ժամագործության ոլորտի ներկայացուցիչների միջև ոսկեգործության, ադամանդագործության և ժամագործության ոլորտի ռազմավարության և գործողությունների ծրագրի իրականացման վերաբերյալ» հուշագիրը.

Ելնելով տնտեսության մրցունակության բարձրացման և շարունակական տնտեսական աճի նպաստելու ապահովման հրամայականներից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը նախաձեռնել է ակտիվ արդյունաբերական քաղաքականության իրականացում, որը միտված է նպաստելու տնտեսության արտահանելի հատվածի ընդլայնմանը՝ արտահանման ներուժի բացահայտման և արդյունավետ իրագործման ճանապարհով:

Ներկայացվող ծրագրի հիմքում ընկած է ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 15-ի նիստի Հայաստանի Հանրապետությունում արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությանը հավանություն տալու մասին արձանագրային որոշումը: Արդյունաբերության զարգացման ծրագրի մշակման և համապատասխան միջոցառումների իրականացման անհրաժեշտությունը նախանշված է նաև ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության արդյունաբերության զարգացման հայեցակարգային ուղղություններ» փաստաթղթում (գլուխ 5):

Հաշվի առնելով հանրապետության արդյունաբերության ոլորտի տնտեսական գործունեության արդյունքները և 2011 թվականի սկզբից գրանցված աճը՝ կարելի է ամրագրել, որ ՀՀ արդյունաբերության ոլորտը հաղթահարելով համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունը՝ ցուցաբերում է կայուն զարգացման միտումներ:

2011 թվականին ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարության 15.12.2011թ. արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել «ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության» ռազմավարությունը, որի գլխավոր նպատակն է երկարաժամկետ հեռանկարում նպաստել տնտեսական աճի նոր շարժիչ ոլորտների ձևավորումը՝ ձեռնարկությունների, արտահանման պոտենցիալ ունեցող ոլորտների և բիզնես միջավայրի անընդհատ արդիականացման և միջազգային մրցունակության բարձրացմանն ուղղված նախաձեռնությունների իրականացման միջոցով: 2012-2020թթ. նախատեսվում է իրականացնել ռազմավարությամբ ընտրված արտահանման ներուժ ունեցող ոլորտային ռազմավարություններով հաստատված համապատասխան միջոցառումները՝ խթանելով տնտեսության արդյունաբերական ոլորտի արտահանելի հատվածի ընդլայնումը:

Պետական մարմինների իրավասության ներքո մատուցվող ծառայությունների շրջանակի նկարագրության ամփոփ աղյուսակ			
N	Ծառայությունների շրջանակի նկարագրություն	Շահառուների շրջանակի նկարագրություն	Պետական հատվածի կողմից ծառայության փոխհատուցման ծավալը
1	Գործարար համաժողովներին (ֆորումների), ինչպես նաև այլ համանման միջոցառումներին մասնակցություն և (կամ) կազմակերպում	Հայաստանի Հանրապետություն, արդյունաբերական ոլորտի ընկերություններ	Մատուցված ծառայությունների փոխհատուցումն ամբողջությամբ կատարվում է ՀՀ պետական բյուջեից:
2	Մշակող արդյունաբերության ոլորտների ընկերություններին օժանդակության ցուցաբերում՝ ֆինանսական գործիքների կիրառմամբ		Կատարվում է ա/ արտադրական գործունեության վարկավորման սուբսիդավորում, բ/օտարերկրյա պետությունում սերտիֆիկացման և դեղերի գրանցման համաֆինանսավորում:
3	Հայկական ապրանքների՝ նպատա-կային շուկաներում առաջմղում, հայկական ապրանքների ներկայացում, շուկայական տեղեկատվության ապահովում		Կատարվում է ա/օտարերկրյա պետությունում հայկական արտադրանքի վերաբերյալ գովազդի և հասարակական կարծիքի ձևավորման (PR) միջոցառումների կազմակերպում և իրականացում, բ/ ցուցահանդեսների կազմակերպում և մասնակցության ապահովումը և գ/ գործարար կապերի հաստատում
4	Ուսումնական դասընթացների մշակման, կազմակերպման և իրականացման ֆինանսավորում		Մատուցված ծառայությունների փոխհատուցումն ամբողջությամբ կատարվում է ՀՀ պետական բյուջեից:
5	Արտահանման բնագավառում ծագող խնդիրների և դրանց լուծմանն ուղղված հետազոտության իրականացում		Մատուցված ծառայությունների փոխհատուցումն ամբողջությամբ կատարվում է ՀՀ պետական բյուջեից:

1.2. Վերջին երեք տարիների զարգացման միտումները

Համաձայն ՀՀ ԱՎԾ ցուցանիշների՝ 2018 թվականին արդյունաբերական կազմակերպությունների կողմից արտահանման աճը կազմել է 6.1 %: Ընդ որում՝ դեպի ԱՊՀ և այլ երկրներ արտահանումն համապատասխանաբար աճել է 7.7 և 6.%-ով):

2017 թվականի ընթացքում ծրագրի իրականացման շրջանակներում շուրջ 550 արդյունաբերական կազմակերպություններ ստացել են պետական աջակցություն տարբեր ուղղություններով, ինչը դրական է ազդել այդ ընկերությունների արտահանման և արտադրության ծավալների աճի վրա: Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են նաև մի շարք համաժողովներ, շնորհանդեսներ, գործարար հանդիպումներ, դիստրիբյուտորական այցեր և այլ միջոցառումներ, մասնավորապես՝

իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

«Հանրաճանաչ միջազգային արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների ներգրավման և մուտքի ապահովման միջոցառումների իրականացում, այդ թվում՝ ազատ տնտեսական գոտում, սփյուռքահայերի տեղեկատվական բազայի ստեղծում» ծրագրով կազմակերպվել են 15 շնորհանդեսներ և/կամ ֆորումներ:

Արդյունաբերության ոլորտի ընկերություններին վարկավորման սուբսիդավորման և սերտիֆիկացման համաֆինանսավորման ցուցաբերում.

«Արտադրական գործունեության վարկավորման սուբսիդավորում» ենթածրագրի շրջանակներում 2017թ. սուբսիդավորվել է 10 ընկերություն:

Շուկայական տեղեկատվության ապահովում, հայկական ապրանքների նպատակային շուկաներում առաջմղման գործունեության իրականացում, հայկական ապրանքների ներկայացում.

1) «Արտերկրում հայկական արտադրանքի վերաբերյալ գովազդի և հասարակական կարծիքի ձևավորման (PR) միջոցառումների մասնակցություն» ենթածրագրի շրջանակներում 2017 թվականին իրականացվել է 5 միջոցառում:

2) «Միջազգային ցուցահանդեսներին մասնակցության ապահովում» ենթածրագրով 2015 թվականին 10 միջազգային ցուցահանդեսների մասնակցություն համար հայկական ընկերություններին տրամադրվել է աջակցություն:

3) «Արտահանմանն օժանդակող կառույցների ներկայացուցիչների և դիստրիբյուտորների այցելություններ Հայաստան և/կամ արտերկիր, գործարար կապերի հաստատում» ենթածրագրով 2017 թվականին Հայաստան և/կամ արտերկիր են այցելել 60 ներկայացուցիչներ:

Համաձայն ԱՎԾ ցուցանիշների 2017 թվականին արդյունաբերական կազմակերպությունների կողմից թողարկվել է (համադրելի գներով) 1608.9 մլրդ դրամի արտադրանք, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել է 22.3%-ով: Իրացված արտադրանքից արտահանվել է 742.7 մլրդ դրամի արտադրանք (շուրջ 46.1%-ը):

2018 թվականին ծրագրի շրջանակներում իրականացվել են հետևյալ միջոցառումները՝

1. **Գործարար համաժողովների (ֆորումների), ինչպես նաև այլ համանման միջոցառումների մասնակցություն և (կամ) կազմակերպում**

Ծրագրով նախատեսվում է իրականացնել առնվազն 3 շնորհանդեսներ և (կամ) համաժողով և (կամ) այլ համանման միջոցառումներ:

2018թ. փաստացի կատարվել է 23 միջոցառում: Մասնավորապես.

- 2018թ. հունվարի 23-26-ը Հիմնադրամը մասնակցել է Շվեյցարիայի Դավոս քաղաքում կայացած Համաշխարհային Տնտեսական Համաժողովին, որի շրջանակներում տեղի են ունեցել հետևյալ հանդիպումները:

- 2018 փետրվարի 3-ից 8-ը Շվեյցարիայի Համադաշնության Ազգային Խորհրդի նախագահ պարոն Դոմինիկ Դը Բյումանի և նրա գլխավորած պատվիրակության Հայաստանի Հանրապետություն այցի շրջանակներում ս.թ. փետրվարի 5-ին Երևան քաղաքում տեղի ունեցավ հայ–շվեյցարական գործարար համաժողով:
- ՀՀ վարչապետ Կարեն Կարապետյանի Լիբանան կատարած պաշտոնական այցի շրջանակում 2018թ. մարտի 12-ին ՀԶՀ ներկայացուցիչը մասնակցել է Լիբանանի գործարար-ներդրողների հետ հանդիպմանը, որին ներկայացվել է Հայաստանի ներդրումային միջավայրը, Հայաստանում գործարարությամբ զբաղվելու առավելություններն ու առանձնահատկությունները, ներդրումներ կատարելու հնարավորությունները:
- 2018թ. մարտի 13-ին տեղի ունեցավ «Գործարար զրույց» խորագրով գործարար միջոցառում ՀՀ վարչապետի, ՀՀ կառավարության անդամների, Բիզնես Արմենիա Հիմնադրամի ներկայացուցիչների և Լիբանանի Առևտրի, արդյունաբերության և գյուղատնտեսության պալատի, Արդյունաբերողների պալատի, Բեյրութի վաճառականների ընկերակցության, Լիբանանցի գործարարների համաշխարհային ընկերակցության, Առևտրի միջազգային պալատի՝ թվով շուրջ 100 ներկայացուցիչների մասնակցությամբ:
- 2018թ. մարտի 14–ին Բիզնես Արմենիա Հիմնադրամի ներկայացուցիչը հանդիպել է Լիբանանի արդյունաբերողների միության անդամ, լիբանանահայ գործարար Նազարեթ Սապունջյանի հետ:
- 2018թ. մարտի 22-25-ին SIMED Group ընկերությունների նախագահ Բոգուսլավ Շիկորսկին ՀԶՀ և Ջրտնտպետկոմիտեի մասնագետների ուղեկցությամբ գործարար պատվիրակությունն այցելել է Արմավիրի մարզ, ծանոթացել ջրային տնտեսությունում իրականացվող ծրագրերին, ջրամբարաշինության ներուժին, հանդիպումներ ունեցել պետական մարմինների և ոլորտի ներկայացուցիչների հետ:
- 2018թ. ապրիլի 9-11-ը Միացյալ Արաբական Էմիրությունների Դուբայ քաղաքում ամենամյա ներդրումային համաժողովի ընթացքում Արմեն Ավակ Ավակյանը իրականացրել է հանդիպումներ մի շարք գործարարների հետ:
- 2018թ. ապրիլի 12-ին Ժնևում կայացած «Armenia: Discover the Opportunities» գործարար համաժողովին մասնակցել են 26 ընկերություններ, որոնցից 8-ի մանսակցությունը ապահովվել է Հիմնադրամի կողմից: Համաժողովի արդյունքում «Շառոյան-Սարյան» ընկերությունն իրականացրել է արտահանման 3 պատվեր՝ 7 200 000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:
- 2018թ. ապրիլի 22-ին Բլոքչեին (blockchain) համաժողովի ընթացքում տեղի են ունեցել հանդիպումներ գործարարների հետ:
- 2018թ. հուլիսի 22-25 Բիզնես Արմենիայի և «ԿՎՆ գրուպի» հետ համատեղ կազմակերպվել է «Շենժեն էիրլայնզ» ընկերության պատվիրակների ընդունելությունը: Պատվիրակության անդամները հանդիպումներ են ունեցել Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահ

Տաթևիկ Ռևազյանի, Զվարթնոց օդանավակայանի տնօրեն Մարսելո Վենդեի, ՀՀ տուրիզմի պետական կոմիտեի և ՀՀ տուրիզմի զարգացման հիմնադրամի ներկայացուցիչների հետ:

- 2018թ. հուլիսի 26-ին «Զեդիդ Քեփիթալ հոլդինգի» գործադիր տնօրենները հանդիպումներ են ունեցել ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար Արծվիկ Մինասյանի հետ, Բիզնես Արմենիայի գործադիր տնօրեն Արմեն Ավակյանի և ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Վախթանգ Աբրահամյանի հետ: Քննարկվել է Հայաստանի ապահովագրական ոլորտը, առկա հնարավորությունները: Ընկերությա նը տրամադրվել է ամբողջական տեղեկատվություն ՀՀ ապահովագրական ոլորտի քաղաքականության և շուկայի մասին:
- 2018թ. օգոստոսի 25-29 Բիզնես Արմենիան «Գարդենիա Դ՛օր» ընկերության հետ համատեղ, ընդունել է պատվիրակություն Լիբանանի Հանրապետությունից: Պատվիրակության անդամները պաշտոնական հանդիպումներ ունեցան ՀՀ Նախագահ Արմեն Սարգսյանի, ՀՀ փոխվարչապետ Տիգրան Ավինյանի, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարար Արծվիկ Մինասյանի, ՀՀ գյուղատնտեսության նախարար Արթուր Խաչատրյանի, ՀՀ զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահ Հռիփսիմե Գրիգորյանի և ՀՀ զբոսաշրջության զարգացման հիմնադրամի նախագահ Արա Խզմալյանի, Շիրակի մարզպետի տեղակալ Սոֆիա Հովսեփյանի և Գյումրիի քաղաքապետ Սամվել Բալասանյանի հետ:
- 2018թ. սեպտեմբերի 17-18-ին ՌԴ-ից Հայաստան են ժամանել «Էկոտեխպրոմ» («Экотехпром») ընկերության ներկայացուցիչները՝ գլխավոր տնօրեն ՌԴ-ում պարոն Սերգեյ Սոպինը և գլխավոր տնօրենի խորհրդատու պարոն Վարազդատ Ղազարյանը: Կազմակերպությունը զբաղվում է բնակելի և ոչ բնակելի շենքերի շինարարությամբ և հետաքրքրված է Հայաստանում Ավանի աղի հանքի հիման վրա հիմնել արդյունաբերական համալիր:
- 2018թ. սեպտեմբերի 22-26-ը Լիբանանում Բիզնես Արմենիայի ներկայացուցիչներն ունեցել են հետևյալ հանդիպումները.
- Հոկտեմբերի 7-ից 12-ը Երևանում անցկացվեց Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովը, որի շրջանակներում նախատեսված էին մի շարք միջոցառումներ:
- Բիզնես Արմենիան ապահովել է հոկտեմբերի 10-ին Թումո կենտրոնում տեղի ունեցող տնտեսական ֆորումի կազմակերպչական աշխատանքները:
- 2018թ. հոկտեմբերի 10-ին Ֆրանկոֆոնիայի համաժողովի շրջանակներում կազմակերպված Տնտեսական Ֆորումի ժամանակ կայացել են հետևյալ հանդիպումներ մի շարք գործարարների հետ («Մեթրաս շիփինգ» , «Դիփ Նեյչր», «Գոլդն Բի Հոմս», «Գրուվ Վեյր Տեկնոլոջիս», «Սոլարսփար», «Գրանթ Թորնթոն Ինթըրնեշնլ», «Արա սթիլ», «Էնջինիրինգ դոբերսեկ», «Հայաս» ընկերությունների ղեկավարության հետ:

- Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նախաձեռնությամբ, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության և Բիզնես Արմենիայի աջակցությամբ, 2018թ. հոկտեմբերի 22-24-ը Հայաստանում կազմակերպվել է «Եվրասիական շաբաթ» միջազգային ցուցահանդեսային համաժողովը, որին մասնակցել է 101 ընկերություն ԵԱՏՄ երկրներից, հայկական կողմից՝ 85 ընկերություններ՝ ներկայացնելով իրենց արտադրանքը: Միաժամանակ, համաժողովի ընթացքում իրականացվել են շուրջ 100 B2B հանդիպումներ:

2. **Հայկական ապրանքների նպատակային շուկաներում առաջմղում, հայկական ապրանքների ներկայացում, շուկայական տեղեկատվության ապահովում.**

1) օտարերկրյա պետությունում հայկական արտադրանքի վերաբերյալ գովազդի և հասարակական կարծիքի ձևավորման (PR) միջոցառումների կազմակերպում և իրականացում. Ենթածրագրի շրջանակներում ակնկալվում է առնվազն 5 միջոցառման իրականացում և (կամ) կազմակերպում:

2018թ. Փաստացի իրականացվել է 5 միջոցառում՝

- ՀՀ վարչապետ Կ. Կարապետյանի Լիբանան կատարած պաշտոնական այցի շրջանակում կազմակերպվել էր «Հայկական անկյուն», որտեղ ներկաները հնարավորություն ունեցան համտեսելու հայկական արտադրատեսականին՝ կոնյակ, գինի, շոկոլադ, չրեղեն:
- Աշխատանքներ են իրականացվում հայկական սննդարդյունաբերության ոլորտի ընկերությունների արտադրանքը 2013 թվականին Պորտուգալիայում ներկայացնելու նպատակով:
- «Global FDI reports» գործակալության Հրատարակչական տնօրեն Պաուլինա Գալարդոյի հետ համագործակցության արդյունքում Արաբական Միացյալ Էմիրություններում հրատարակվող, Միջին Արևելքի և Ծոցի երկրներում տարածվող անգլալեզու Gulf News օրաթերթը հատուկ թողարկում է նվիրել Հայաստանին՝ ներկայացնելով մեր երկրի ներդրումային առավելությունները, երկրի իմիջն ու գործարար միջավայրը:
- Ստոկհոլմ քաղաքում հոկտեմբերի 23-24 «The Emerging Europe Alliance for Business Services, Innovation and Technology» և «Nordic IT Association» կազմակերպությունների կողմից նախաձեռնած նորարարական տեխնոլոգիաների համաժողովին ներկայացվել են Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ներուժը և ներդրումային առավելությունները:
- Բիզնես Արմենիայի աջակցությամբ սեպտեմբերի 6-15-ը Հայաստանը միասնական տաղավարով մասնակցել է Դամասկոսի 60-րդ միջազգային ցուցահանդեսին «Շտիգեն» ընկերության կողմից ներկայացվել է շնորհանդես:

1.1 2) «Ցուցահանդեսների կազմակերպում և մասնակցության ապահովում» ենթածրագրով նախատեսվում է ընդհանուր առմամբ աջակցել ընկերություններին առնվազն 7 ցուցահանդեսի մասնակցելու նպատակով:

2018թ. 3-րդ եռամսյակում փաստացի ապահովվել է 3 ցուցահանդեսներում 62 հայկական ընկերությունների մասնակցությունը:

Մասնավորապես՝

- 2018 թվականի փետրվարի 5-9 Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաք Մոսկվայում կայացած սննդի, խմիչքի և դրանց արտադրության հումքի «PRODEXPO 2018» միջազգային մասնագիտացված ցուցահանդեսին կազմակերպվել է հայկական 21 ընկերությունների մասնակցությունը մեկ «Միասնական» հայկական տաղավարով:
- Իրականացվել են աշխատանքներ փետրվարի 13-16-ը Գերմանիայի Նյուրնբերգ քաղաքում կայացած «BioFach 2018» օրգանական սննդամթերքի միջազգային ցուցահանդեսին հայկական ընկերությունների մասնակցության համակարգման և արդյունավետ մասնակցության հետ կապված խորհրդատվութան ուղղությամբ:
- 2018թ. մարտի 20-23 ՌԴ Մոսկվա քաղաքում կայացած «Текстильлегпром 2018» 50-րդ ցուցահանդեսին կազմակերպվել է հինգ հայկական ընկերությունների մասնակցությունը («Լենտեքս» ՍՊԸ, «Սարտոն» ՍՊԸ, «Արշալույս» ԲԲԸ, «Ալեքս Տեքստիլ» ՍՊԸ, «Մոսինի» ՍՊԸ), որոնք ներկայացրել են տրիկոտաժի, գուլպեղենի, տնային և սպորտային հագուստի, հավաքածուներ:
- 2018 թ. մարտի 13-16-ը ՌԴ Մոսկվա քաղաքում կայացած կաշվե իրերի, կոշիկի և դրանց արտադրության համար հումքի միջազգային «Мосшуз» ցուցահանդեսին կազմակերպվել է կոշիկ և կաշվե պարագաներ արտադրող ութ հայկական ընկերությունների մասնակցությունը:
- Ցուցահանդեսի արդյունքում կնքվել են 226,8 մլն ՀՀ դրամի արտահանման պայմանագրեր:
- Իրականացվել են աշխատանքներ 2018թ. մարտի 29-31-ը Երևան քաղաքում կայացած Սպառազինության եւ պաշտպանական տեխնոլոգիաների «ArmHiTec 2018» միջազգային ցուցահանդեսի մասնակից ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրման ուղղությամբ:
- Իրականացվել են աշխատանքներ Ղազախստանի Ալմաթի քաղաքում 2018թ. ապրիլի 5-8-ը կայացած «ԱՌՈՒ» 30-րդ ամենամյա ոսկերչական ցուցահանդեսին ոսկերչության ոլորտը ներկայացնող հայկական 7 ընկերությունների («Արամ Ղազարյան» Ա/Ձ, «Անահիտ Մարգարյան» Ա/Ձ, «Արտակ Բոջիկյան» Ա/Ձ, «Միտարիո Գոլդ» ՍՊԸ, Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ, «Ջեյ Սի Էյ ոսկերչական ընկերություն» ՓԲԸ, «Ռաֆօլ» ՍՊԸ) մասնակցությունը ապահովելու նպատակով: Ցուցահանդեսի արդյունքում հայկական ընկերությունները կնքել են 56,8 մլն ՀՀ դրամի պայմանագրեր:

- 2018 թ. սեպտեմբերի 4-ից 7-ը ՌԴ Մոսկվա քաղաքում կայացած «CPM- Collection Premiere Moscow» ցուցահանդեսին կազմակերպվել է թեթև արդյունաբերության և նորաձևության ոլորտի հայկական 14 ընկերության՝ «Ալեքս տեքստիլ» ՍՊԸ, «Լենտեքս» ՍՊԸ, «Հելլո» ՍՊԸ, «Սաթենկար» ՍՊԸ, «Արշալույս» ԲԲԸ, «Նշանէկս» ՍՊԸ, «Սանշայն ֆիլմզ» ՍՊԸ, «Շապիկ» ՍՊԸ , «Կիվեռա Նայնոմիս» ՍՊԸ, «ԼՈՒՄ» ՍՊԸ, «Բիայնի 2015» ՍՊԸ , «Ֆաինա դիզայն» ՍՊԸ, «Ատելյե 51» ՍՊԸ, «Թեթև արդյունաբերության արտահանողների կոնսորցիում» ՓԲԸ մասնակցությունը: Ցուցահանդեսի արդյունքում կնքված պայմանագրերի վերաբերյալ ընկերությունների կողմից առաջին հաշվետրվությունը պետք է տրամադրվի հոկտեմբերի ընթացքում, որի մասին լրացուցիչ տեղեկատվությունը կտրամադրվի տարեկան հաշվետվությամբ:
- 2018 թ. սեպտեմբերի 10-ից 13-ը ՌԴ Մոսկվա քաղաքում կայացած կաշվե իրերի, կոշիկի և դրանց արտադրության համար հումքի միջազգային «Moсшуз» ցուցահանդեսին կազմակերպվել է կոշիկ և կաշվե պարագաներ արտադրող վեց հայկական ընկերությունների «Էլմա շուզ» ՍՊԸ, «Բաբիննի» ՍՊԸ, «ԼԿՌ Հովսեփյաններ» ՍՊԸ, «Սիմար» ՍՊԸ, ԱՁ Արսեն Բաղիկյան, ԱՁ Հովհաննես Ղազարյան մասնակցությունը:
- Բիզնես Արմենիա հիմնադրամի աջակցությամբ «Ռաֆոլ», «Երևանի Ոսկերչական Գործարան – 1 «Գնոմոն», «Շաբեր» ընկերությունները և Արշավիր Դավթյան, Մարտին Միսակյան, Արտակ Բոջիկյան, Աշվարի Շառմա անհատ ձեռնարկատերերը, սեպտեմբերի 26-ից 30-ը մասնակցել են “Junwex Moscow” միջազգային ոսկերչական ցուցահանդեսին: Հայկական արտադրողները միջազգային խոշոր գնորդներին ու դիստրիբյուտորներին են ներկայացրել թանկարժեք, կիսաթանկարժեք, բնական քարերով ոսկյա և արծաթյա զարդեր:
- 2018 թվականի հոկտեմբերի 21-25 «Բիզնես Արմենիա» հիմնադրամի աջակցությամբ թվով 11 հայկական ընկերություններ մասնակցել են «SIAL Paris 2018» միջազգային սննդի ցուցահանդեսին: Ընկերությունների թվում են «Իբարի» ՍՊԸ, «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ, «Ս ընդ Ս» ՍՊԸ, «Նաիրյան Գուրմե» ՍՊԸ, «Երևանի գարեջուր» ՓԲԸ, «Մէգա Արարատ» ՓԲԸ, «Ռոզֆրուդ» ՍՊԸ, «Ավշատպրոդ» ՍՊԸ, «Նատֆուդ» ՓԲԸ, «Ավելիաց’» ՍՊԸ և «Սիս Նատուրալ» ՓԲԸ: Ընկերությունների կողմից ներկայացված օպերատիվ հաշվետվության համաձայն ցուցահանդեսի մասնակցության արդյունքում ընկերությունները կնքել են 7.8մլն դրամի արտահանման պայմանագիր:

3) **գործարար կապերի հաստատում:**

Ակնկալվում է աջակցել (կազմակերպել) արտահանմանն օժանդակող կառույցների, դիստրիբյուտորների առնվազն 60 ներկայացուցչի այցելությանը Հայաստան և (կամ) տեղական արտադրողների գործարար այցելությանը օտարերկրյա պետություն:

- ՀՀ վարչապետի Լիբանան կատարած պաշտոնական այցի շրջանակներում 2018թ. մարտի 7-14-ը Լիբանանի Բեյրութ քաղաքում կայացել են հետևյալ գործարար միջոցառումներն ու հանդիպումներ«Bank Audi» գրուպի, վարչապետի խորհրդական Կարմա Էկմեկջիի «Gardenia Grain D'or», Այնճար քաղաքի քաղաքապետ Վարտկես Խոշյանի հետ:
- 2018 թվականի մայիսի 18-ին Հայաստանի ՌԴ առևտրային ներկայացուցչությունում տեղի է ունեցել գործարար հանդիպում՝ «Ձկնաարտադրություն, ծովամթերք և տեխնոլոգիաներ 2018» ցուցահանդեսի կազմակերպիչների հետ, որին Բիզնես Արմենիայի աջակցությամբ մասնակցել են ոլորտում գործունեություն իրականացնող 12 հայկական արտադրողներ:
- Իրանում Հայաստանի դեսպանության և ԻԻՀ «Փայամնամա-յե Իրանիան» ընկերության հետ համագործակցությամբ, հունիսի 22-24-ը «Երևան էքսպո» ցուցահանդեսային համալիրում կայացած SS և թվային տեղեկատվության ոլորտին նվիրված ցուցահանդեսի շրջանակներում, որին մասնակցում են 26 իրանական ընկերություն, աջակցություն է ցուցաբերվել կազմակերպիչներին՝ մի շարք հանդիպումների կազմակերպման մասով
- Հայաստանի և ԵՄ համագործակցության շրջանակներում 2018թ. սեպտեմբերի 26-ին կազմակերպվել է «Նոր գործարար հնարավորություններ. ԵՄ-Հայաստան համապարփակ և ընդլայնված գործակցության համաձայնագրի կիրառում» միջոցառումը:
- Բիզնես Արմենիայի աջակցությամբ՝ ԱՄԷ "DTS SOLUTION" ընկերությունը մասնակցել է Դիջիթեք ցուցահանդեսին:
- Քարի արտահանման նպատակով կազմակերպվել է իսպանական ընկերության այց Հայաստան: Այցի շրջանակներում կազմակերպվել է 9 այց քարի արտադրության գործարաններ և հանքավայրեր, որի արդյունքում ընտրված ընկերություններն ուղարկել են իրենց գնային առաջարկները:
- 2018թ. գործարար համաժողովների, ցուցահանդեսների, գործարար այցերի շրջանակներում իրականացվել է 256 B2B հանդիպումների կազմակերպում:
- 2018թ-ին կապ է հաստատվել և հանդիպումներ են տեղի ունեցել 300 ՕՈՒՆ ընկերությունների հետ: ՕՈՒՆ ընկերությունների տվյալների բազան համալրվել է 20 ընկերությունով Ներկայումս տվյալների բազայում ընդգրկված են 320 ընկերություններ:
- 2018թ կազմակերպել է 20 տեղանքների ուսումնասիրության այցեր՝ ներկայացնելով կոնկրետ տեղանքներ, համատեղ քննարկելով ազատ տնտեսական գոտիներից, տեխնոլոգիական և լոգիստիկ կենտրոններից օգտվելու հնարավորությունները:
- Հավաքագրվել և կազմվել է արտադրական տարածքների, ինչպես նաև հողատարածքների տվյալների բազա, որի մեջ այս պահին ներառված է 30 հողատարածք:

- 2018 թվականին Բիզնես Արմենիայի աջակցությամբ իրականացվել է ընդհանուր 12,7 միլիոն ԱՄՆ դոլարի ներդրում: Աշխատանքներ են իրականցվել 5 ներդրումային ծրագրերի իրականացման ուղղությամբ:
- 2018 թվականին բանակցություններ են տարվել և աշխատանքներ իրականցվել 22լ ներդրումային ծրագրերի իրականացման ուղղությամբ՝
- 2018թ.-ի ապրիլից Բիզնես Արմենիան և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը (ՄԱԶԾ) մեկնարկել են «Էլեկտրոնային կառավարումը՝ որպես օտարերկրյա ներդրումների ներգրավումը խթանելու գործիք» դրամաշնորհային ծրագիրը: Պետական մարմինների և մասնավոր հատվածի շրջանում իրականացված հետազոտության արդյունքում բացահայտել է Հայաստանում ներդրումների համար էական նշանակություն ունեցող ընթացակարգերը:
- Բեռնափոխադրման, սերտիֆիկացման, աուդիտի, հաշվապահական, անձնակազմի կառավարման, ՏՏ, իրավաբանական և բիզնես խորհրդատվություն մատուցող Գործարարների աջակցության ակումբի անդամ հանդիսացող ընկերությունների շարքը համալրել են ևս 5 ընկերություն:
- «ԹԱԳ» ապրանքանիշի ներքո արտադրվող հուշանվերների փաթեթը ներկայացված է ընդհանուր 30 վաճառակետերում՝ այդ թվում ՀՀ-ում պետական գերատեսչությունների կազմում գտնվող և մասնավոր հատվածի 21, եկեղեցիներին կից գործող 5 վաճառակետերում, ինչպես նաև ՌԴ-ում 3 և ԱՄՆ-ում գործող 1 վաճառակետերում:
- Բիզնես Արմենիայում գործարկվել է հեռախոսային «Թեժ գիծ» ծառայությունը:

3. **«Ուսումնական դասընթացների մշակման, կազմակերպման և իրականացման ֆինանսավորում» ենթածրագրով** ակնկալվում է ապահովել 1 դասընթացի կազմակերպում:

Ենթածրագրի շրջանակներում հաշվետու ժամանակաշրջանում դասընթացներ դեռևս չեն կազմակերպվել, սակայն իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ դեղագործական ոլորտի ներկայացուցիչների հետ:

4. **Արտահանման բնագավառում ծագող խնդիրների և դրանց լուծմանն ուղղված հետազոտության իրականացում: Ակնկալվում է իրականացնել 1 հետազոտություն**:

Ենթածրագրի շրջանակներում հաշվետու ժամանակաշրջանում դեռևս հետազոտություններ չեն իրականացվել:

Ռազմավարության իրականացման ուղղությամբ 2019 թվականին նախատեսվում են հետևյալ միջոցառումները՝

1) **գործարար համաժողովների (ֆորումների), շնորհանդեսների, ինչպես նաև այլ համանման միջոցառումների մասնակցություն և (կամ) կազմակերպում**. ենթածրագրի շրջանակներում նախատեսված միջոցառումները նպատակաուղղված են օտարերկրյա պետությունում և

(կամ) Հայաստանում օտարերկրյա ու հայկական ընկերությունների, պոտենցիալ ներդրողների, սփյուռքահայ գործարարների, պաշտոնական պատվիրակությունների մասնակցությամբ Հայաստանի Հանրապետության տնտեսության, նրա առանձին ոլորտների և կազմակերպությունների զարգացման հնարավորությունների, ներդրումային ծրագրերի ներկայացմանը և քննարկմանը: Ենթածրագրի շրջանակներում ակնկալվում է մասնակցել և (կամ) կազմակերպել առնվազն 3 շնորհանդես և (կամ) համաժողով և (կամ) այլ համանման միջոցառումներ, անհրաժեշտության դեպքում, ենթածրագրի շրջանակներում, ներգրավելով շահագրգիռ պետական կառավարման մարմինների պաշտոնական ներկայացուցիչներին: Աջակցությունը տրամադրվում է Հիմնադրամի կողմից սահմանված կարգով՝ օտարերկրյա պետությունում կազմակերպվող միջոցառումներին մասնակցության համար կատարված ծախսերի փոխհատուցման ձևով՝ մինչև 50 տոկոսի չափով:

2) արդյունաբերության ոլորտի ընկերություններին օժանդակության ցուցաբերում՝ ֆինանսական գործիքների կիրառմամբ.

ա. արտադրական գործունեության վարկավորման մասնակի սուբսիդավորում.

ենթածրագիրը նախատեսում է արտահանման ուղղվածություն ունեցող մշակող արդյունաբերության ոլորտի, պաշտպանական և ազգային անվտանգության կարիքների համար արտադրություն իրականացնող և (կամ) ճարտարագիտական ծառայություններ մատուցող, ինչպես նաև սահմանամերձ համայնքներում արտադրություն իրականացնող կազմակերպություններին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորում: Սուբսիդավորվելու է վարկի տոկոսադրույքի մինչև 5 (հինգ) տոկոսային կետին համարժեք գումարը վարկի առաջին 2 (երկու) տարվա համար, «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ ֆոնդային բորսայում ցուցակված տնտեսվարողների դեպքում՝ մինչև 5 (հինգ) տարվա համար, իսկ Հավելվածի 1-ի 9-րդ կետով սահմանված սահմանամերձ համայնքներում գործունեություն իրականացնող տնտեսվարողներին տրամադրվող վարկերը սուբսիդավորվելու են Հավելվածի 1-ի 9-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված չափով: Ենթածրագրի շրջանակներում ակնկալվում է վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման աջակցություն տրամադրել առնվազն 10 սուբյեկտի,

3) հայկական ապրանքների նպատակային շուկաներում առաջմղում, հայկական ապրանքների ներկայացում, շուկայական տեղեկատվության ապահովում.

ա. օտարերկրյա պետությունում և (կամ) Հայաստանում հայկական արտադրանքի վերաբերյալ գովազդի և հասարակական կարծիքի ձևավորման (PR) միջոցառումների կազմակերպում և իրականացում ենթածրագրի շրջանակներում նախատեսվում է գովազդային արշավների կազմակերպում, այդ թվում՝ հայկական արտադրանքի վերաբերյալ բուկլետների և կատալոգների հրատարակում, էլեկտրոնային ռեսուրսների պատվիրում, արտահանման շուկաների վերաբերյալ տեղեկատվական նյութերի ձեռքբերում և տրամադրում ընկերություններին, հայկական բրենդների ձևավորման, օտարերկրյա պետությունում և (կամ) Հայաստանում հայկական արտադրանքի համտեսների,

շնորհանդեսների, մրցույթների ու նորաձևության ցուցադրությունների, ինչպես նաև այլ նմանատիպ միջոցառումների մասնակցության և (կամ) կազմակերպմանն աջակցություն, անհրաժեշտության դեպքում, ենթածրագրի շրջանակներում, ներգրավելով շահագրգիռ պետական կառավարման մարմինների պաշտոնական ներկայացուցիչներին: Ենթածրագրի շրջանակներում նախատեսվում է նաև միջոցառումներին պետական կառույցների ներկայացուցիչների մասնակցության ապահովում: Ընդհանուր առմամբ, ենթածրագրի շրջանակներում ակնկալվում է նպատակային շուկաներում և (կամ) Հայաստանի Հանրապետությունում տեղական արտադրանքի առաջմղման առնվազն 5 միջոցառման կազմակերպում և (կամ) մասնակցություն:

բ. ցուցահանդեսների կազմակերպում և մասնակցության ապահովում ենթածրագրի շրջանակներում նախատեսվում է թիրախային շուկաներում և Հայաստանում մշակող արդյունաբերության ոլորտների կազմակերպություններին ցուցահանդեսներին մասնակցության աջակցության տրամադրում: Օտարերկրյա պետությունում կամ Հայաստանում ցուցահանդեսներին մասնակցությունը և (կամ) կազմակերպումը կարող են լինել հետևյալ ձևաչափերով՝ միասնական հայկական տաղավարով մասնակցություն. այս դեպքում մասնակցության կազմակերպումն իրականացվում է միասնական տաղավարի սկզբունքով, որի վարձակալության, կառուցապատման, ձևավորման և դրա հետ կապված տպագրական նյութերի, կահույքի և սարքավորումների վարձակալության, մասնակիցների գրանցման ծախսերն իրականացվում են ծրագրի շրջանակներում Հիմնադրամի կողմից: Առանց միասնական տաղավարի մասնակցություն. այս դեպքում տաղավարների ձեռքբերման, կազմակերպչական աշխատանքների իրականացման և մասնակիցների ծախսերի շուրջ 50 տոկոսն իրականացվում է համաֆինանսավորման սկզբունքով: Անհատական մասնակցություն. այս դեպքում ընկերությունները, նախապես համաձայնեցնելով Հիմնադրամի հետ, մասնակցում են ցուցահանդեսներին՝ ներկայացնելով և հիմնավորելով ծախսերը, ստանում են փոխհատուցում՝ շուրջ 50 տոկոսի չափով: Ընդհանուր առմամբ, ենթածրագրի շրջանակներում ակնկալվում է աջակցել ընկերություններին՝ առնվազն 7 ցուցահանդեսի մասնակցելու նպատակով: Ցուցահանդեսների կազմակերպման և (կամ) մասնակցության աջակցության տրամադրման կարգը սահմանում է Հիմնադրամը:

գ. **գործարար կապերի հաստատում** ենթածրագրի շրջանակներում նախատեսվում է աջակցության տրամադրում՝ Հայաստանի Հանրապետություն օտարերկրյա գործարարների, դիստրիբյուտորների, մասնագետների, շահագրգիռ կառույցների ներկայացուցիչների գործարար այցելության, տեղական արտադրողների օտարերկրյա պետություն գործնական այցելությունների կազմակերպման նպատակով: Սույն միջոցառումը կնպաստի աշխատանքային կապերի ստեղծմանը և հնարավոր արտահանման գործընկերների ձեռքբերմանը: Ընդհանուր առմամբ, ենթածրագրի շրջանակներում ակնկալվում է աջակցել (կազմակերպել) արտահանմանն օժանդակող կառույցների, դիստրիբյուտորների առնվազն 60 ներկայացուցչի այցելությանը Հայաստանի Հանրապետություն և (կամ) տեղական արտադրողների այցելությանը օտարերկրյա պետություն: Ակնկալվում է արդյունա-

բերական ոլորտի տնտեսվարող սուբյեկտներին ցուցաբերել աջակցություն՝ կատարված ծախսերի փոխհատուցման ձևով՝ մինչև 50 տոկոսի չափով:

4) **ուսումնական դասընթացների մշակման, կազմակերպման և իրականացման ֆինանսավորում** ենթածրագրի շրջանակներում նախատեսվում է մշակող արդյունաբերության ոլորտների ընկերությունների և ազատ ունկնդիրների կարողությունների զարգացում: Մասնավորապես՝ նախատեսվում է արդիական տեխնոլոգիաների ու նեղ մասնագիտացված ուղղություններով Հայաստանում և (կամ) օտարերկրյա պետությունում ուսուցման ու վերապատրաստման կազմակերպում և անհատական խորհրդատվության տրամադրում՝ ներգրավելով որակավորված մասնագետներ պետական, մասնավոր, գիտական շրջանակներից, այդ թվում՝ օտարերկրյա պետությունից: Սույն միջոցառումը կարող է ներառել արտադրության կազմակերպման, մարքեթինգի, մտավոր սեփականության իրավունքի, ֆինանսական հոսքերի կառավարման, ապահովագրության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների, ինչպես նաև մշակող արդյունաբերության ոլորտների արհեստագործական և այլ մասնագիտական դասընթացների իրականացում: Ենթածրագրի շրջանակներում ակնկալվում է ապահովել առնվազն 1 դասընթացի կազմակերպում, ընդ որում՝ դասընթացներն իրականացվում են ըստ անհրաժեշտության՝ ոլորտի ներկայացուցիչների հետ համաձայնեցված և (կամ) շուկայի պահանջարկի ուսումնասիրությունների հիման վրա:

5**) արտահանման բնագավառում ծագող խնդիրների և դրանց լուծմանն ուղղված հետազոտության իրականացում** ենթածրագրի շրջանակներում ակնկալվում է իրականացնել 1 հետազոտություն:

Միջոցառումը կիրականացվի ըստ անհրաժեշտության՝ մշակող արդյունաբերության ոլորտների կազմակերպությունների և ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության առաջարկների հիման վրա:

1.3. Հիմնական խնդիրները

